ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 162

ք. Երևան 10.02.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 05028672, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ, Երևանյան /Շ/ 85/3) միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/9-10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը պետք է մատակարարեր 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը պետք է մատակարարեր՝ 400 հատ «Ներկելու հոլակ, լոգնոցով», 80 հատ «Մետաղ կտրելու մկրատ (փշալար, թիթեղ)», 10 հատ «Բենզասղոց», 100 կգ «Պարանիտ պոն (քլինգրիտ) 3 մմ», 100 կգ «Պարանիտ ՊՈՆ (քլինգրիտ) 5 մմ/», 50 կգ «Խծուծ ԽԲՊ (набивка) Φ 6 մմ», 50 կգ «Խծուծ ԽԲՊ (набивка) Φ10 մմ», 30 կգ «Ասբոշնուր 28 մմ», 1,000 հատ «Ջեռուցման մարտկոցներ Ա-600», որոնք «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Հաշվի առնելով, որ «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ